2. ՍՏՈՐՈՒՄՆԵՐ ԴԺՈԽՔՈՒՄ

Մենք ոտք դրեցինք մի համակարգից մյուսը և ինքներս մեզ սփոփեցինք, որեմն, ամեն ինչ լավ կլինի. մեզ հետ են Արցախի ազատագրման առաջամարտիկները, նրանց օգնությամբ մենք կվերականգնենք դժոխքի կալվածատիրոջ կողմից ոտնահարված արդարությունը, քանզի բոլորս մի սիրտ ենք ու մի հոգի, մի մարմին ենք ու մի բռունցք: Մեր կամքը չի կարողացել կոտրել նույնիսկ այն դժոխային ու խիստ կասկածելի երկրացունցը, որը սարսուռի պես անցավ հարյուր հազարվոր հայ մարդիկների վրայով, գետնատակ տալով նրանցից շատերին: Ավերակների տակից փրկվածների առաջին հարցը լինում էր ի՞նչ եղավ Ղարաբաղի հարցը:

Եվ, իրո՛ք, ոչ մի հայ անտարբեր չէր անցել հայրենիքի ճակատագրի կողքով: Սա հենց այն դեպքն էր, երբ ամբողջ ժողովրդի կամքը կարծրացել ու դարձել էր մի բռունցք: Միայն մնում էր այդ բռունցքով ջարդել դժոխքի երկրորդ պարունակի դուռը և տանջեցյալներին փոխադրել առավել տանելի հաջորդ պարունակը: Սակայն կատարվեց անսպասելին. դեռևս չլուծած ընթացիկ հարցը՝ երկրորդական պլան մղվեց Արցախի ճակատագիրը: Ասել կուզի, որ հայ ժողովրդի միասնական բռունցքը բացվելով՝ նորից բաժանվեց մատների:

Բռունցքը միանգամից թուլացավ, Արցախը մնաց երկրորդական պլանում, և ավերիները ձեռքները շփելով և գողանալով հայերի գրեթե բոլոր անասունները, ուրախությունից դուրբան արեցին դրանք ալլահին և վերականգնելով իրենց կորուստյալ հավատը Լեռնային Ղարաբաղի վերազավթման նկատմամբ, խլեցին նախաձեռնությունը և անցան բացահայտ կեղծիքի՝ առաջ քաշելով Ղարաբաղի ադրբեջանական պատկանելության առասպելը և արդարացնելով իրենց բարբարոսությունները:

Այսօր յոթ միլիոնանոց Ադրբեջանը «հերոսական» պատերազմ է մղում հարյուր հիսուն հազար արցախցիների դեմ:

Առաջին հերթին ահա հենց այս պատճառով է, որ մենք իրավունք չունեինք բացելու մեր սեղմված բռունցքը և հեշտությամբ գիջելու: Գետաշենը իր շրջակա բոլոր գյուղերով, Հադրութի շրջանի մի զգալի մասը: Դեռ լավ է, որ թշնամին այդ օրերին լրջորեն ջախջախվեց Հայաստանին սահմանամերձ Խծաբերդի մատույցներում, այլապես Արցախը ետ կշպրտվեր մայր հայրենիքից տասնյակ կիլոմետրերով:

Արցախի նշանակությունը հասկանում էր հավաքական հայ ժողովուրդը: Հասկանում էր, երբ միասնական բռունցք էր դարձել չարի թագավորության դեմ: Բայց երբ նորից բաժանվեց մատների ու հոդերի,— փոխվեց հայ մարդկանց բնավորությունը, նրանց ապրելակերպն ու վարվելակերպը, և նրանցից շատերն արդեն չեն հասկանում «Չկա Ղարաբաղ՝ չկա Հայաստան» անառարկելի ճշմարտությունը: Ես ավելի քան համոզված եմ. եթե արցախյան հիմնահարցի լուծման ճանապարհին մեր պառլամենտում երկչոտության փոխարեն հանդես քերվեր միասնություն, ապա այսօր մեր մարդկային, կենսական ու տարածքային կորուստները կլինեին, եթե ոչ լիովին բացառված, ապա նվազագույնս: Եթե ամեն ինչ արվում է պետական մակարդակով, ապա ազդակները հաղորդվում են յուրաքանչյուր անհատի, և յուրաքանչյուր անհատ կամա թե ակամա դառնում է հիմնահարցի լուծման մասնակից: Դա էլ իր հերթին հասկացնել է տալիս թշնամուն, որ նա չի կարող իր հաշիվները կառուցել մեր թուլությունների վրա, հետևաբար անպատիժ չի մնա ավազակությունների, շրջափակումների, անասնագողության ու պատմամշակութագողության համար:

Ադրբեջանն իրեն հայտարարեց անկախ պետություն, և Թուրքիան անմիջապես ճանաչեց նրա անկախությունը: Լեռնային Ղարաբաղը իրեն հայտարարեց անկախ պետություն, և Հայաստանի պառլամենտը սպասում է, թե երբ Արցախի անկախության ճանաչումն սկուտեղի վրա իրենց հայրենակիցներին կմատուցեն աշխարհի պառլամենտներն ու մեջլիսները, իսկ դրանից հետո արդեն տեխնիկայի հարց կլինի նրա անկախության ճանաչումը Հայաստանի կողմից... Հապաղման այսպիսի քաղաքականությունը ջլատում է մարդկանց ուժերը, փոխում նրանց հոգեբանությունը ներկայի և ապագայի հանդեպ, և նրանք, ոտնատակ տալով անցյալը, ու նաև խեղաթյուրված պատկերացումներ ունենալով ապագայի նկատմամբ, ներկայի հետ վարվում են ամենատանջալի եղանակներով: Այժմ անդրադառնանք հայ մարդկանց անցման շրջանի հոգեբանությանը և վարքուբարքին: Գեղեցիկ բացառությունները մի կողմ դնենք և խոսենք ազգի վրա ստվեր նետող տգեղ երևույթների մասին: Խոսենք և ճանաչենք բոլոր նրանց, ովքեր մի-մի դույլ ձյութ վերցրած՝ շարունակում են բորբոքել դժոխքի առանց այդ էլ հեղձուցիչ կաթսաները: Եվ այսպես...

Բայց, ո՛չ, մենք անուններ չենք տա, քանզի դրանց ցուցակը կարելի է ճշտել միայն ապագայում, եթե, իհարկե, կարողանանք ողջ ու առողջ դուրս պրծնել կպրատնից ու ոտք դնել... առայժմ քավարան: Թեև բացառված չէ, որ նրանք դարձյալ խորամանկելով՝ մեզ կթողնեն այնտեղ և իրենք առոք-փառոք կանապարհեն դեպի դրախտի գերագույն աստիճանները: Ի միջի այլոց, սա արդեն այլ թեմա է և դրա շուրջ գուցե արժե խոսել հաջորդ անգամ:

Արտաշես ՊՈՂՈՍՅԱՆ